ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ **N 93-Ն**

05 հոկտեմբերի 2022 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի ղեկավարի առաջարկությունը.

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝</u>

1.Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 03, դաս 02 (Նավթամթերք և բնական գազ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և շինությունների կառուցում) հոդվածից «1500.0» հազար դրամ հատկացնել խողովակներ ձեռք բերելու համար և որպես համայնքային ներդրում հանձնել Մարալիկ, Քարաբերդ, Գուսանագյուղ և Ջիթհանքով բնակավայրերի բնակիչներին՝ գազաֆիկացումն ապահովելու համար :

2.Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 01, դաս 01 (Նախադպրոցական կրթություն) և տնտեսագիտական դասակարգման 4657 (Այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածից «2500.0» հազար դրամ որպես համայնքային ներդրում հատկացնել «ՇԵՆ» Բարեգործական Հիմնադրամին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի «Սառնաղբյուրի մանկապարտեզի համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2 խմբասենյակների և մարզադահլիճի վերանորոգման» ծրագրի իրականացման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ՝ -10 Դեմ՝-0 Ձեռնպահ՝-0

Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Ա. ԱՐՍԵՆՅԱՆ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մ.ՂԱՁԱՐՅԱՆ

Գ.ՂԶՐՈՅԱՆ

Բ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

Ա. ՆԻԿՈՅԱՆ

Զ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ա. ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թվականի հոկտեմբերի 05
Քաղաք Մարալիկ